ՄԶՄԿ
iCHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. *ո՞րն է այն*

19 Սայաթ Նովա, Երեւան
Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Հոլիստական մոտեցում՝ հասկանալու համար

Երկրի պետական տնտեսական քաղաքականության տրամաբանությունը հասկանալու համար հարկ է նայել երկարաժամկետ նպատակադրումներին, որոնք այն դնում է իր առջև: Սա ճշմարտություն է, և այս տեսանկյունից մեր երկրում իրականացվող քաղաքականությունը հասկանալի և ընդունելի է: Իսկապես, դինամիկ զարգացող, մրցունակ, արդիական ենթակառուցվածքներով ազատ շուկայական տնտեսություն կառուցելու նպատակադրումները, որ դրվել ու դրվում են պետական բոլոր ծրագրերում, իրավամբ այլընտրանք չունեն:

Նպատակները՝ նպատակներ, բայց համաձայնեք, դրանք իրագործելու ճանապարհները խիստ տարբեր կարող են լինել: Ինչպե՞ս է պետությունը կարգավորում տնտեսության զարգացման գործընթացը ժամանակի կոնկրետ հատվածում, ինչպե՞ս է իրականացվում այդ քաղաքականությունն այսօր, այս պահին. սրանք հարցեր են, որոնց պատասխանները դժվար է գտնել ռազմավարական ծրագրերում: Ծրագրերը «պետք է»-ների առաքելություն ունեն, այսպահային իրագործումը՝ բազմակողմ համագործակցության և փոխլրացման տրամաբանություն:

Իրականում որևէ կոնկրետ ժամանակահատվածի տնտեսական քաղաքականության ընդհանրական պատկերը հասկանալու համար՝ պարզության տեսանկյունից ճիշտ է դիտարկել երեք հարթություն.

1. ինստիտուցիոնալ դաշտի (լայն իմաստով) կայացմանն ուղղված ջանքերը,
2. տնտեսության ճյուղերում և ենթաճյուղերում արվող քայլերը,
3. մակրոտնտեսական քաղաքականությունը, թե որքանով է այն բարենպաստ դաշտ ստեղծում վերոնշյալ երկուսի համար:

Ընդհանուր տնտեսական քաղաքականության համալիրը ենթադրում է սրանցից յուրաքանչյուրը և բոլորը միասին՝ իբրև մեկ ամբողջություն:

Դառնամ, զօղորմին տի տամ…

Որքան էլ զավեշտալի թվա, 90-ականների պետական տնտեսական քաղաքականության իրականացման ընդհանուր տրամաբանությունը շատ ավելի կանխատեսելի էր, հասկանալի, թե ով ինչ է անում, և ինչքան ժամանակ հետո ինչ ցուցանիշներ պիտի ապահովի: Մակրոտնտեսական քաղաքականության տեսանկյունից իրականացվում էին Արժույթի միջազգային հիմնադրամի վարկային ծրագրերը, որոնք հստակ ամրագրում էին մակրոտնտեսական հիմնական բոլոր ցուցիչների նպատակային մեծությունները յուրաքանչյուր եռամսյակի և տարվա համար, և դրանք ենթակա էին պարտադիր կատարման: Տնտեսության ինստիտուցիոնալ դաշտում և ճյուղերում իրականացվում էին Համաշխարհային բանկի և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների տարաբնույթ վարկային ծրագրեր, որոնք նույնպես ամրագրում էին պարտադիր կատարման հստակ քայլեր և սահմանում վերահսկողություն: Վերահսկողություն էր սահմանված սեփականաշնորհման գործընթացի տեմպերի ապահովման, բյուջետային ծախսերի տրամաբանության և նմանօրինակ այլ խնդիրների նկատմամբ: Նշենք, որ տնտեսության իրական հատվածի զարգացումը բնութագրող տնտեսական միտումների տեսանկյունից (իրական հատվածի հիմնական ճյուղերի աճի դինամիկա, արտահանման աճի տեմպեր, ներմուծման փոխարինում տեղական արտադրանքով և այլն) 90-

ականների վերջն ու դարասկզբի առաջին 1-2 տարիները տնտեսությունը «ճիշտ հունի մեջ դնելու» հաջողված ժամանակահատված կարելի է համար:

Երբ մասերը պարտավոր են ծառայել ամբողջին

Ի՞նչ ունենք այսօր, ինչպե՞ս գնահատել մեր երկրում այսօր իրականացվող տնտեսական քաղաքականությունն իր ամբողջության մեջ: Ի վերջո ինչպիսի՞ տնտեսություն ենք մենք կառուցում, ո՞րոնք են ՀՀ պետական տնտեսական քաղաքականության բնութագրիչներն այսօր: Մենք ընտրել ենք տնտեսության մի քանի ճյուղեր/ենթաճյուղեր ու դրանց մրցունակությու՞նն ենք ավելացնում, թե՞ կայացնում ենք ուժեղ ինստիտուտներ, որոնք կոչված են սպասարկել տնտեսության ազատ և մրցակցային զարգացումը: Միգուցե երկուսը միասի՞ն: Մեր տնտեսական ռազմավարությունը կառավարության ծրագի՞րն է, Աղքատության հաղթահարման ռազմավարությու՞նը, թե՞ մեկ այլ փաստաթուղթ: Միգուցե դրանք բոլորը միասի՞ն:

Եթե պետական մի քանի գերատեսչություններ ջանք ու եռանդ չեն խնայում առանձին ճյուղերի/ենթաճյուղերի մրցունակությունն ավելացնելու համար, մի՞թե ոչ ոք չի տեսնում, թե ինչպես է դրամի քառատրոփ արժևորումը ջուրը լցնում բոլոր այդ աշխատանքները: Ինչու՞ չենք ընդունում ճշմարտությունը, որ չարժե գնալ թույլ ինստիտուցիոնալ կառույցներով պետության դերի ուժեղացման, որ պետությունը չի կարող լինել արդյունավետ սեփականատեր և տնտեսական դաշտում ավելի լավ է ոչինչ չանի, քան վատ անի:

Ի վերջո, ո՞վ կարող է մտաբերել վերջին տարիների ընթացքում որևէ հայեցակարգային ելույթ, որ հրապարակավ հնչեցվել է որևէ պետական բարձրաստիճան այրի կողմից, ուր բացահայտվել են ներկայում իրականացվող տնտեսական քաղաքականության հիմնադրույթները, դրանց փոխպայմանավորվածությունները, և բացատրվել է, թե ինչու է արվում այսինչ բանը և ինչով է այն կապված այնինչի հետ: Օրինակ, եթե մենք քիչ ռեսուրսներ չենք ծախսում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գրավչության և մրցունակության բարձրացման համար, ապա ինչպե՞ս են «օժանդակում» արժույթի շուկայում ձևավորված միտումներն այդ ջանքերին: Այսօրինակ հարցեր կարելի է երկար շարադրել:

Այսօր մեզանում շատ քիչ ուսումնասիրություններ են կատարվում, գրվում գիտական վերլուծություններ, որոնք ունեն այսպահային քաղաքականությանն ուղղված առաջարկների տեսք: Մշակվողներն էլ առավելապես ռազմավարական նպատակադրումների հարթությանն են անդրադառնում: Այսօր մեր երկրում գրեթե բացակայում է քաղաքականություն իրականացնողների և հասարակության միջև երկխոսությունը՝ միտված տնտեսական քաղաքականության ներկայացմանն ու քննարկմանը: Թերևս մեկ-մեկ լսումներ լինում են ԱԺ-ում, դրանք էլ գրեթե դուրս չեն գալիս ԱԺ պատերից այն կողմ: Դրա փոխարեն տեղի են ունենում տարաբնույթ քննարկումներ փորձագիտական շրջանակներում, որանք էլ, սակայն, մնում են անհետևանք, քանզի չկա այդօրինակ քննարկումների արդյունքները քաղաքականության օրակարգ հասցնելու մեխանիզմը:

Արդյո՞ք նշված պայմաններում արդիական չի դառնում Հայաստանում «տնտեսական քաղաքականության բարձրագույն խորհուրդ» կամ այդօրինակ մի մարմնի ստեղծումը, որը քննարկումների հրապարակ կդառնա տնտեսական քաղաքականությանն առնչվող բոլոր կողմերի համար և կփորձի մեկ կաթսայի մեջ բերել տարամիտվող բոլոր ջանքերը:

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ 2006թ-ի նոյեմբերի 14-ին կայացած՝ «Հայեցակարգային մոտեցումներ ՀՀ տնտեսական զարգացման ռազմավարությանը» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի աջակցությամբ: